Գևորգ Էմին

Տխուր պատմություն

Նա ինձ այնպես խո՛ր ու խե~նթ է սիրում,
Որ պատրաստ է-
Իմ մի՛ խոսքի սիրույն-
Զոհել իր կյա՛նքն ու տենչե՛րն անհամար.

Իսկ ես, չոքա~ծ քո ծնկների առաջ,
Իրա~ր եմ խառնում արցունք ու հառաչ,
Քո, թեկուզ մի… կե~ղծ ժպիտի համար…

Նրան, ում չէի սիրում

Ես քեզ երդում չե՛մ տալիս,- դու գիտե՛ս,
Քեզ չեմ կանչում ,- դու գիտես.

Սերն ըղձանքի~ց է ծնվում, տենչանքի~ց,
Դու ի՛նքդ ես ինձ հյուր գալիս,- դու գիտես.

Չէ՞ որ նվերն, - ինչքա~ն էլ թանկագին,-
Նվաճնա՛ծն է ցանկալի,- դու գիտես:

Դու ինձ չէի~ր ճանաչում,- ինչո՞ւ եկար,
Չէի~ սիրում ու կանչում,- ինչո՞ւ եկար,

Ա՛յն, ինչ երդմա~մբ են տալիս ու լացով,
Ինձ… խլե~լ ես աղաչում,- ինչո՞ւ եկար…

….Հիմա անցնում ես՝ օտա~ր մի անցորդ
Եվ կրկին չե՛ս ճանաչում,- ինչո՞ւ եկար: